

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԼԱՅԱՆ ՄԵՐԻ ՍԱՐԳՍԻ

ԽՈՍՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆրանսերեն
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր Ն. Կ. Հարությունյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր Ի. Կ. Կարապետյան բանասիրական գիտությունների թեկնածու Ճ. Ա. Մինասյան
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012թ. հունիսի 29-ին՝ ժամը 14⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՅ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մայիսի 25-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ`

Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱՎԻՐԸ

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Գր լեզվաբանական ուղղվածության բուհերում նոր հիմքերի վրա է դրվում ֆրանսերենի մասնագիտական ուսուցման հիմնախնդիրը: Նկատվում է ֆրանսերենի դերի բարձրացման հստակ միտում թե՛ դպրոցական, թե՛ բուհական համակարգում: Ակնհայտ է, որ ֆրանսերենի մասնագիտական ուսուցումն ու ուսումնառությունն ունեն հստակ արտահայտված հաղորդակցական ուղղվածություն: Այդ համատեքստում խոսութային իրազեկության զարգացման համապատասխան մեթոդական ընթացակարգերի ընտրությունը պահանջում է ուսուցման տեղի, սովորողների համակազմի, նրանց տարիքի, ճանաչողական, գործաբանական պահանջները շարունակական ճշգրտում:

«խոսույթ» հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի մեծանուն փիլիսոփա, մտածող Միշել Ֆուկոն: Միշել Ֆուկոյի գաղափարները մեծ արձագանք գտան ոչ միայն փիլիսոփայության, հասարակագիտության, այլ նաև ընդհանուր լեզվաբանության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի բնագավառներում: Հիշատակման արժանի են գերմանացի սոցիոլոգ Յուրգեն Հաբերմասի աշխատանքները, որոնցում խոսույթը խոսքային հաղորդակցության տեսակ է, որի բովանդակային բաղադրամասերը ձևավորվում են արժեքային համակարգի և սոցիալական կյանքի նորմերով: Իրազեկային զարգացման տեսանկյունից կարևոր է այն, որ Յու. Հաբերմասը ներմուծել է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «գործնական խոսույթ», «քննադատական խոսույթ»:

Դեռևս 20-րդ դարի 70-ական թվականներին Օ. Ի. Մոսկալսկայան առաջարկում է տեքստի լեզվաբանության երկու հիմնական օբյեկտ, որոնք հաճախակի առանց տարբերակման անվանվում են «տեքստ»:

Թեմատիկ մոտեցումը բացահայտում է տեքստի նոր բովանդակային առանձնահատկությունները: Մեթոդաբանները դիտարկում են թեման տեքստի հետ նույն գործառական հարթության վրա:

Տեքստին և խոսույթին վերաբերող տեսությունները մեծ զարգացում ապրեցին իմաստաբանության և հաղորդակցական լեզվաբանության զարգացման արդյունքում: Վերջինս կարևոր է նախ և առաջ նրանով, որ առաջին պլան է մղում խոսքի ուսումնասիրությունը: Տեքստի և խոսույթի տեսությունների զարգացման համար քիչ կարևոր շրջան չէ գործաբանական լեզվաբանության տեսանկյունից դրանց դիտարկումը: Առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես Ջ. Օստինի և Ջ. Սեռլի խոսքային ակտերի տեսությունը:

Ֆրանսերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել խոսույթի ձևավորման ոչ միայն լեզվական, այլ նաև արտալեզվական գործոնները, քանի որ ցանկացած հաղորդակցություն իրականացվում է նշված գործոնների ազդեցությամբ:

Ընդհանուր առմամբ խոսույթը ներկայանում է որպես որոշակի պայմաններում առկայացող տեքստ և դիսկուրսիվ կամ խոսութային պրակտիկա: Այսպիսով, խոսույթը խոսքի հոսք է, մշտական շարժման մեջ գտնվող լեզու, որն արտացոլում է պատմական ժամանակաշրջանի բազմազանությունը, հաղորդակցվողների անհատական և հասարակական առանձնահատկությունները:

Խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցի հետազոտություններում խոսույթը սերտ առնչության մեջ է դրվում արտահայտության //énonciation/ հետ, իսկ տեքստը` ասույթի //énoncé/: Փաստորեն տեքստը կարելի է սահմանել որպես ենթատեքստից զուրկ խոսույթ, և այս դեպքում ուսումնասիրողից պահանջվում է իր հետազոտություններում տեքստից անցում կատարել դեպի խոսույթ` ուսումնասիրելով հատկապես խոսութաստեղծման պայմանները: Տեքստի և խոսույթի հակադրությամբ խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցը, ապա Գրեյմսայան նշանագիտությունն առաջ են քաշում այն ավանդական մոտեցումը, ըստ որի` նախալեզվական գործոնը պայմանավորում և կանխորոշում է լեզվական իրողությունը, դրա հետ մեկտեղ չկարևորելով այն, որ այդ նույն նախալեզվական գործոնը կարող է լինել խոսութաստեղծման սոցիալական պայմանների արդյունք կամ նշանային համակարգի որևէ կաղապար:

«Տեքստ» և «խոսույթ» հասկացությունների հարաբերակցությունն ավելի է շեշտվում տարբեր նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից: Դասախոսակենտրոն կամ ուսուցչակենտրոն կաղապարին փոխարինելու է գալիս ուսանողակենտրոն կամ աշակերտակենտրոն կաղապարը: Մանկավարժներն

աստիճանաբար գիտակցում են, որ իրենք նախ և առաջ գիտելիքներ փոխանցող գիտահետազոտողներ են, ովքեր մշտապես զոնվում են որոնումների մեջ: Չկան համընդհանուր ճիշտ մեթոդներ և հնարներ, հայեցակարգեր կամ մոտեցումներ: Մանկավարժները պիտի շարունակաբար վերանայեն և վերաիմաստավորեն ուսուցման ու ուսումնառության տեխնոլոգիաները և հարթահարեմ ընդունված կարծրատիպերը: Նրանց հիմնական դերը ոչ թե գիտելիք հաղորդելն է, այլ սովորողների քննադատական, ստեղծագործական մտածողության զարգացումը:

Ֆրանսերենի իրադրային ուսուցման կազմակերպման համար կարևոր է այն, որ խոսույթը կարող է բաղկացած լինել մեկ կամ երկու բառից: Դրա հետ մեկտեղ խոսույթը կարող է լինել հազարավոր բառերից կազմված մի գրական գործ: Սա մեծ հնարավորություններ է ընձեռում խոսութաստեղծ գործունեությունն ծավալելու համար, որտեղ առաջնային դեր է հատկացվում խոսութային վերլուծությանը:

Խոսույթի վերլուծությունը հետազոտության ինքնուրույն բնագավառ է: Նրա սկզբունքները կիրառվում են օտար լեզուներին հարակից տարբեր գիտությունների ոլորտներում՝ լեզվաբանություն, հոգելեզվաբանություն, հանրալեզվաբանություն և այլն: Խոսութային վերլուծությանը նվիրված շատ հետազոտություններ առնչվում են օտար լեզուների ուսուցման խնդիրներին:

Առաջին պլան մղելով խոսույթը՝ որպես ուսուցման հիմնական միավոր՝ կարևորում ենք հաղորդակցական և խոսութային իրազեկության զարգացման անհրաժեշտ ուսումնամեթոդական պայմանների ստեղծումը: Կարևորվում է նաև ուսումնական, բնագիտ տեքստի հետ աշխատանքի համապատասխան ընթացակարգերի մշակումը՝ հաշվի առնելով այն, որ ուսուցման հատկապես ավարտական փուլում խոսութաստեղծ գործընթացը դառնում է ուսուցման հիմնական նպատակ, քանի որ այն ընկած է հաղորդակցական իրազեկության զարգացման հիմքում:

Խոսութային իրազեկության զարգացումը կարևոր դեր է խաղում նաև սոցիալ-մշակութային իրազեկության զարգացման համար: Մի կողմից՝ թե՛ խոսութային, թե՛ սոցիալ-մշակութային իրազեկության զարգացումն անհրաժեշտ պայման է հաղորդակցական իրազեկության զարգացման համար, մյուս կողմից՝ խոսութաստեղծ գործընթացը հանգեցնում է խոսույթի տարբեր ձևերի տիրապետման և հաղորդակցական իրավիճակներում դրանց կիրառման:

Ուսումնական նպատակներով խոսույթի կիրառումն արդյունավետ է տարբեր առումներով: Լինելով բավականին դինամիկ, շարժուն և զարգացող երևույթ՝ այն փոփոխությունների է ենթարկվում նախ և առաջ արտալեզվական գործոնների ազդեցությամբ: Ակնհայտ է, որ առաջադրելով խոսույթը՝ որպես ուսուցման հիմնական միավոր՝ մենք բովանդակային լուրջ փոփոխությունների ենք ենթարկում օտար լեզուների ուսուցման գործընթացը: Փոխվում է թե՛ ուսուցման բովանդակությունը, թե՛ միջանձնային փոխհարաբերությունների դինամիկան: Ֆրանսերենի մասնագիտական դասընթացում կարևորվում է ոչ միայն ուսանողների խոսութաստեղծ ունակությունների ձևավորումը, այլ նաև նրանց խոսութային վերլուծության կարողությունների զարգացումը:

Այսպիսով, ֆրանսերենի ուսուցումն օտար լեզուների ֆակուլտետում բազմագործառույթ է և հետապնդում է տարբեր նպատակներ: Մասնագիտական մակարդակում ուսանողները հարստացնում են իրենց լեզվական և լեզվաբանական գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Հաղորդակցական մակարդակում առաջնային խնդիր է հաղորդակցական կարողությունների շարունակական զարգացումն ու խորացումը: Կարևոր է այն, որ ֆրանսերենի մասնագիտական ուսուցման գործընթացում խոսույթը ոչ միայն խոսքային, այլ նաև ոչ խոսքային հաղորդակցական միջոցներն է ներկայացնում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ է ստեղծել բնական լեզվամշակութային միջավայրին մոտ խոսութաստեղծ իրադրություններ, որոնք ընկած կլինեն խոսութային իրազեկության զարգացման հիմքում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է ստեղծել համապատասխան խոսութաստեղծման կադապրներ և ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և ընթացակարգերի կիրառմամբ մշակել ֆրանսերենը որպես մասնագիտություն ուսումնասիրող ուսանողների հաղորդակցական և խոսութային իրազեկությունը զարգացնող մեթոդական համակարգ:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ֆրանսերենի մասնագիտական ուսուցումն է բուհական համակարգում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ խոսույթների ընտրության, տարբեր ուսումնախոսքային իրադրություններում դրանց կիրառման, խոսութաստեղծման գործընթացն է ֆրանսերենի մասնագիտական դասընթացում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Ֆրանսերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս և կազմակերպելիս անհրաժեշտ է ուսուցման հիմնական միավոր համարել խոսույթը, որի հետ տարվող աշխատանքը կազմակերպվում է ոչ թե տեքստի և խոսույթի հակադրման, այլ համադրման սկզբունքով: Եթե ուսումնական-խոսքային իրադրությունները

կադապարվեն ըստ խոսույթի ծավալման բովանդակային և գործառական բնութագրերի, ապա կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ խոսութային իրազեկության զարգացման համար:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՂԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Յետազոտել տեքստի և խոսույթի բովանդակային և գործառական բնութագրերը բացահայտող համապատասխան լեզվաբանական և մեթոդական գրականություն:
2. Բացահայտել խոսութային իրազեկության զարգացման առանձնահատկությունները:
3. Համեմատել առկա տեքստային վարժությունները համապատասխան խոսութաստեղծ վարժությունների հետ և հիմնավորել առաջարկվող խոսութային ուղղվածության վարժությունների համակարգը:
4. Ձուգադրական կտրվածքով վերլուծել հայերենին և ֆրանսերենին բնորոշ լեզվամշակութային իրողությունները ոչ միայն բառային, այլ նաև մշակութային փոխներթափանցման տեսանկյունից:
5. Մշակել խոսութային իրազեկությունը զարգացնող մեթոդական համակարգ, որը ներառում է համապատասխան տեքստերի, վարժությունների, թեմաների, իրադրությունների և խոսույթների ընտրության, կազմակերպման ընթացակարգեր և տեխնոլոգիաներ:
6. Հիմնավորել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը համապատասխան գիտափորձով:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲՄԱՆԱԿԱՆ հիմքում ընկած են հետևյալ հայեցակարգերը և տեսությունները. մշակույթների երկխոսության (Յ. Ի. Антонов, Յ. Ս. Ямпилова, Ե. Մ. Верещагин, Յ. Գ. Костомаров), տեքստային գործունեության (Թ. Մ. Дридзе), լեզվամշակութային իրազեկության զարգացման (Ն. Դ. Гальскова, Մ. Յ. Елухина), շփման քերականության (Յ. Ա. Кан - Калик), ուսումնական տեքստի դժվարության չափման (Մ. Մ. Гохлернер), խոսքային իլոկուտիվ, լոկուտիվ, պերլոկուտիվ ակտերի (Գ. Хельбиг), փոխակերպական կադապարների (Ն. Chomsky), իրադրային քերականության (Ա. Walter), իրազեկային մոտեցման տեսությունները՝ արտացոլված եվրոպական լեզվական քաղաքականության փաստաթղթերում (Թ. Hutchinson, Ա. Waters):

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ.

Խոսութային իրազեկության զարգացմանը տարբեր տեսանկյուններից առնչվում են տեքստի վերլուծության (Է. Դ. Աղայան և Գ. Բ. Ջահուկյան), տեքստի միջոցով մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման (Վ. Ա. Հայրյան, Ռ. Ս. Պետրոսյան, Ս. Պ. Ասատրյան), ֆրանսերեն և հայերեն լեզուների զուգադրական վերլուծության տեսանկյունից բառային և քերականական փոխներթափանցման (Ա. Վ. Բարլեզիգյան), ֆրանսերեն հատկաբանությունների դասակարգման (Ա. Հ. Նազարյան), ենթատեքստային ուսուցման դրոպապատճառների զարգացման (Ա. Ա. Вербицкий), մասնագիտական շփման (Ա. Մ. Есенгалиева), մանկավարժական թեստի (Մ. Ա. Жумаева) սկզբունքները: Յետազոտության խնդիրները հստակեցնելիս՝ հաշվի է առնվել անգլերենի քաղաքական հրապարակախոսական խոսույթի ոճական վերլուծությանը նվիրված ատենախոսությունը (Հ. Մ. Ավագյան) : Ի. Վ. Կարապետյանը և Մ. Օ. Գյոդակյանը հանգամանորեն վերլուծում են խոսութային իրազեկության հանրամշակութային բաղադրամասը: Ա. Գ. Մանուկյանի հետազոտության առարկան է խոսութային իրազեկության փուլային զարգացման առանձնահատկությունները մասնագիտական անգլերենի դասավանդման գործընթացում: Բանավոր խոսքի զարգացման են նվիրված Գ. Պ. Ալեքսանդրովայի և Ա. Ա. Ալխազիշվիլու հետազոտությունները (Գ. Ս. Александрова, Ա. Ա. Алхазшвили): Խոսույթի բովանդակային բնութագրերին են նվիրված Ն. Դ. Հարությունովայի և Վ. Գ. Բորբոտկոյի աշխատանքները (Ն. Դ. Арутюнова, Յ. Գ. Борботько): Մ. Վ. Բիսմալիևան համեմատում է «տեքստ» և «խոսույթ» հասկացությունները: Կարևորվում է խոսույթի դերը միջմշակութային հաղորդակցության գործընթացում (Ն. Յ. Елухина): Վ. Ի. Կարասիկը ներկայացնում է խոսույթի տեսակները (Յ. Ս. Карасик):

Միջմշակութային շփման հիմնախնդիրը դիտարկված է մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից (Յ. Յ. Сафонова, Յ. Ս. Фурманова):

Կարևորվում են այն աշխատանքները, որոնք նվիրված են քաղաքական խոսույթի նշանաբանությանը (Է. Ս. Шейгал), խոսույթի վերլուծությանը (Է. Benveniste, Մ. Pécheux, Լ. Guespin, Ք. Charaudeau, Թեյն Ա. Van Dijk), խոսույթի և ենթատեքստի հարաբերակցությանը (Ն. Մ. Schiffrin):

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ.

- ֆրանսերենի բառապաշարի ուսուցման հիմնական միավորների կիրառման ընթացակարգերի բովանդակային, գործառական վերլուծություն,
- հաղորդակցական իրազեկության շրջանակներում ուսանողների խոսութաստեղծ գործունեության արդյունավետության բացահայտում,
- թեստավորում, դիտում և հարցազրույց,
- ֆրանսերենի խոսքային, խոսակցական կառույցների կադապարում,
- հետազոտության վարկածի և մշակված մեթոդական համակարգի գիտափորձարարական հիմնավորում:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԸ այն է, որ ստեղծվել է խոսութաստեղծ կաղապար, որի հիմքում ընկած են գործաբանական լեզվաբանության ու հաղորդակցական մոտեցման սկզբունքները, և մշակվել է խոսութային իրազեկության զարգացմանը նպաստող մեթոդական համակարգ (խոսութաստեղծ տեքստեր և վարժություններ, ուսումնական ֆիլմերի հետ տարվող նոր տիպի աշխատանք, ոչ խոսքային հաղորդակցական միջոցների ներկայացում), որի ստեղծման մեթոդաբանության հիմքում ընկած են ուսումնական խոսույթների ընտրության և կիրառման հաղորդակցական ուղղվածություն ունեցող սկզբունքները:

Խոսութային իրազեկության զարգացման տեսանկյունից համապատասխան լեզվաբանական և մեթոդական գրականության հետազոտման, տեքստերի ու խոսույթների ընտրության սկզբունքների և խոսույթի զարգացման պայմանների ու միջոցների հստակեցման արդյունքում ստեղծվել է համապատասխան դասընթացի կազմակերպման արդյունավետ կաղապար, որով իրականացնում ենք հետևյալ գործառնությունները.

- շրջանառվող ուսումնամեթոդական համալիրների հարմարեցում,
- ուսումնական և բնագրային տեքստերի ընտրություն,
- համապատասխան վարժությունների և առաջադրանքների կազմում:

Փորձարկվել և կիրառվել են խոսութային իրազեկության թեստերը, որոնք ունեն ստուգողական-ուսուցողական բնույթ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

1. Խոսութաստեղծ գործընթացը ենթադրում է տեքստի և խոսույթի հետ աշխատանքի ժամանակ նրանց գործառնությունների միջև շարունակական կապի ապահովում: Խոսույթը չի հակադրվում տեքստին: Այն ընկած է խոսքաստեղծման հիմքում:
2. Խոսութային իրազեկության զարգացմանը նվիրված լեզվաբանական աշխատանքները չեն բացահայտում խոսութաստեղծ գործունեության մեթոդական առանձնահատկությունները: Հանդես գալով որպես հաղորդակցական իրազեկության հիմնական բաղադրամասերից մեկը՝ խոսութային իրազեկության զարգացումը ենթադրում է գործաբանական, սոցիալ-մշակութային, ռազմավարական և այլ իրազեկությունների համամասնական զարգացում:
3. Խոսույթի վերլուծության ընթացակարգերը կարող են արդյունավետորեն կիրառվել ֆրանսերենի մասնագիտական դասընթացի ավարտական փուլում: Խոսույթի վերլուծական կարողություններն ընկած են թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի զարգացման հիմքում:
4. Տեքստի և խոսույթի ընտրության սկզբունքներն իրարից տարբերվում են իրենց բովանդակային և գործառնական առանձնահատկություններով: Նույնը վերաբերում է խոսութային իրազեկության թեստավորման սկզբունքներին, որոնք ձևավորվում են հաղորդակցական մոտեցման շրջանակներում:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ուսումնասիրվել են տեքստի և խոսույթին վերաբերող հիմնական լեզվաբանական, հոգելեզվաբանական, հանրալեզվաբանական և մեթոդական մոտեցումները, բացահայտվել են այդ հասկացությունների բովանդակային, գործառնական, ծագումնաբանական կապը և բառային, քերականական փոխներթափանցման դրսևորումները հայերենի ու ֆրանսերենի տիպաբանական առանձնահատկությունների տեսանկյունից: Ստեղծվել է խոսութաստեղծ արդյունավետ կաղապար իր համապատասխան բաղադրամասերով, որտեղ ապահովվում են մակերեսային և խորքային կառույցների պահանջվող փոխակերպումները: Փորձարկվել են խոսութային իրազեկության ստուգման հետազոտության արդյունքներով հիմնավորված թեստեր և առաջարկվել է խոսութային իրազեկության զարգացման համապատասխան մեթոդական համակարգ:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Մշակվել է ֆրանսերենը որպես մասնագիտություն ուսումնասիրող ուսանողների խոսութային իրազեկության զարգացման, ստուգման և գնահատման վարժությունների համակարգ: Մշակվել են ուսումնական իրադրություններում կիրառվող խոսույթների վերլուծության ընթացակարգեր: Կատարվել է դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բովանդակությունը լրացնող նոր ուսումնական նյութի մանկավարժական գիտափորձ, որը կարող է նպաստել բուհական և դպրոցական նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական համակարգերի ստեղծմանը, ժամանակակից ծրագրերի կազմմանը:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆՆԸ ապահովվում է կիրառված հիմնադրույթներով, մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական ու մեթոդական առանձնահատկություններին համապատասխան և մանկավարժական գիտափորձի արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.

Հետազոտության արդյունքները զեկուցվել ու հավանության են արժանացել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արտասահմանյան լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐ իրականացվել է ՀՀՄԳ-ի և ԵՊԼՀ-ի օտար լեզուների ֆակուլտետներում՝ երրորդ կուրսում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿՍՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ. «Խոսության իրազեկության զարգացումը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում» վերնագրով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 150 մեքենագիր էջ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են հետազոտության արդիականությունը, հիմնախնդիրը, գիտական վարկածը, նպատակը, առաջադիր խնդիրները, մեթոդաբանական հիմքը, օբյեկտը, առարկան, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև մշակվածության աստիճանը, գիտական նորույթը և մեթոդները, որոնք ընկած են տվյալ աշխատանքի հիմքում:

Ատենախոսության **առաջին**՝ «Խոսությամբ ֆրանսերենի ուսուցման հիմնական միավորների համակարգում» վերնագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից.

- «Խոսությամբ» հասկացությունը ժամանակակից լեզվաբանական տեսություններում,
- Խոսության հոգեբանամանկավարժական հայեցակետը,
- Խոսության սոցիալ-մշակութային հայեցակետը:

Առաջին գլխում վերլուծված է «Խոսությամբ» հասկացությունը՝ նրա բովանդակային և գործառնական բնութագրերի տեսանկյունից: Բացահայտված են «Խոսությամբ», «տեքստ», «ասույթ», «արտահայտություն», «երկխոսություն» հասկացությունների առանձնահատկությունները՝ ֆրանսերենի ուսուցման մեթոդական միավորների տարբեր դասակարգումների տեսանկյունից:

Սույն գլխում ընդհանուր գծերով ներկայացվում են «տեքստ» և «խոսությամբ» հասկացությունները, դրանց լեզվաբանական, հոգեբանական, հանրալեզվաբանական հայեցակետերը: Հիմնավորվում է այն գաղափարը, որ ընդհանուր լեզվաբանության շրջանակներում խոսության վերլուծությունը և տեքստի լեզվաբանությունը սկսեցին ներկայանալ միմյանց համատեքստում՝ որպես միմյանց գիտության զարգացման տարբեր աստիճաններ ներկայացնող հետազոտության ոլորտներ:

«Տեքստ» և «խոսությամբ» հասկացությունների սահմանազատմանը նպաստեցին գործառնական, գործառնական, փոխակերպական լեզվաբանության, հանրալեզվաբանության, հոգեբանականության, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման արդի միտումները:

Սույն հետազոտության համար առանցքային մշակականություն ունի այն, որ խոսությամբ սկսեցին քննության առնել գործառնական լեզվաբանության տեսանկյունից, քանի որ այն ներառում է ոչ միայն խոսքային, այլ նաև ոչ խոսքային հաղորդակցության միջոցները: Ավելին՝ գործառնական լեզվաբանության հայեցակերպը լուսաբանում է լեզվակրի մշակութային, ազգային մտածելակերպին բնորոշ առանձնահատկությունները:

Նշվում է, որ հոգեբանական կամ անհատական մակարդակում խոսության կիրառումը ուսումնական գործընթացում ենթադրում է մանկավարժի ընտրած ռազմավարության, աշխատանքի, արժեքային համակարգի շարունակական իմաստավորում և վերաիմաստավորում:

Խոսության դերը կարևորվում է հաղորդակցական մոտեցման շրջանակներում, քանի որ անհնարին է պատկերացնել որևէ խոսութաստեղծ գործընթաց առանց ինտերակտիվ մեթոդների կիրառման, առանց ուսանող-ուսանող փոխհարաբերությունների ակտիվացման և ուսուցման կազմակերպման ժողովրդավարական եղանակի հետևողական ներդրման: Այստեղ կարևորվում է դասավանդման ռազմավարությունների ընտրությունն ու կիրառումը համապատասխան խոսքային իրադրություններում:

Ուսումնական գործընթացի անձնակողմնորոշիչ կազմակերպման դրական արդյունք են հանդիսանում ուսանողների ինտելեկտուալ և հուզական զարգացումը, գիտելիքների յուրացման հիմնավորվածությունը, մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, ակտիվության և ինքնուրույնության բարձրացումը: Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում տեղի է ունենում ուսուցման գործընթացի հարմարեցում ուսանողների անհատական հնարավորություններին՝ հաշվի առնելով անձի ճանաչողական, ինտելեկտուալ և հուզական զարգացման խնդիրները:

Ֆետագոտության **երկրորդ**՝ «Խոսութային իրազեկության ձևավորման առանձնահատկությունները և ուսուցումը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում» վերնագրով գլուխը կազմված է երեք ենթագլխից.

- Խոսութային իրազեկության զարգացման հիմնախնդիրը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում,
- Խոսութային իրազեկության զարգացման հիմնախնդիրը և ուսուցումը ֆրանսերենի մասնագիտական դասագրքերում,
- Խոսութային իրազեկությունը զարգացնող մեթոդական համակարգը:

Սույն գլխում քննվում են խոսութային իրազեկության ձևավորման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում, վերլուծության են ենթարկվում վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում կիրառվող, այս կամ այն մեթոդական ավանդույթին կամ հարացույցին բնորոշ՝ ֆրանսերեն լեզվի գործնական ուսուցման խորհրդային, ֆրանսիական, հայկական դասագրքեր՝ խոսութաստեղծ գործունեության ծավալման տեսանկյունից, և առաջարկվում է խոսութային իրազեկությունը զարգացնող համապատասխան մեթոդական համակարգ:

Յինձավորվում է այն դրույթը, ըստ որի՝ խոսութային իրազեկությունը հանդես է գալիս որպես հաղորդակցական իրազեկության կարևորագույն բաղադրամաս: Ֆրանսերենի մասնագիտական դասընթացում խոսութային իրազեկությունն անհրաժեշտ պայման է խոսքային վարքագծի պլանավորման, կապակցված, տրամաբանական և հիմնավորված արտահայտություններով տեղեկատվությունը հասկանալու և փոխանցելու, շփման գործառական խնդրին համաձայն՝ արտահայտությունը կառուցելու և կազմակերպելու համար, որտեղ առաջին պլան են մղվում ոչ միայն խոսքային, այլ նաև ոչ խոսքային արտահայտչամիջոցները:

Խոսութաստեղծ գործունեության ընթացքում ուսանողները պետք է ոչ թե անգիր սովորեն խոսքային կաղապարները, այլ պետք է ստեղծեն և ընկալեն տարբեր խոսույթներ՝ հաշվի առնելով հաղորդակցման նպատակներն ու դիտավորությունները: Խոսքային կարողությունները շատ մեծ դժվարությամբ են ձեռք բերվում: Դա է պատճառը, որ անհրաժեշտ է խոսույթների սերման և ընկալման համապատասխան ընթացակարգերի կատարումն ապահովող մեթոդական համակարգ մշակել:

Խորհրդային Միությունում, ՀՀ-ում և Ֆրանսիայում լույս տեսած ֆրանսերենի գործնական ուսուցման դասագրքերի համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել այն դրական փորձը, որը կուտակվել է ֆրանսերենի դասագրքաստեղծման գործընթացում, և ստեղծել համապատասխան խոսութաստեղծ կաղապար՝ տարբեր ուսումնական իրադրություններում կիրառելու նպատակով:

Խոսութային իրազեկությանը վերաբերող տեսական, մեթոդաբանական գրականության և մասնագիտական դասագրքերի վերլուծությունը հնարավորություն ընձեռեց առաջադրել և հիմնավորել ֆրանսերենի դասագրքերին ներկայացվող խոսութաստեղծ տեքստերի, երկխոսությունների, դրվագների, իրադրությունների ընտրության սկզբունքները:

- Երևում է լեզվանյութը գործաբանական, հանրամշակութային տեղեկատվություն պարունակող ծայերիզներով, տեսաերիզներով,
- համեմատական կտրվածքով ներկայացնել Հայաստանի, հայ ժողովրդի հանրամշակութային երևույթները,
- ավելացնել ընդհանուր բաժիններում և հավելվածում ֆրանսահայ սփյուռքի կյանքը ներկայացնող տեքստեր և տեսահոլովակներ,
- ներառել դասանյութերում մշտական բաժին՝ նվիրված խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության միջոցներին:

Խոսութաստեղծ գործունեությունը խթանող տարրերի բացահայտման տեսանկյունից վերլուծության է ենթարկվել նաև “Espaces” դասագրքաշարի 3-րդ՝ “Espaces 3 perfectionnement - Méthode de français” դասագիրքը՝ նախատեսված օտար լեզուների ֆակուլտետների երրորդ կուրսի համար: Խոսութաստեղծ տեքստերի, առաջադրանքների և վարժությունների ներմուծումը հիմք է ստեղծում նշված դասագրքի ավելի արդյունավետ և նպատակային կիրառման համար:

Հաշվի առնելով խոսույթների ընտրության և կիրառման հաղորդակցական ուղղվածություն ունեցող սկզբունքները, խոսութաստեղծ գործունեության ծավալման անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև պահպանելով համապատասխան դասի թեմայի հետ ներդաշնակությունն ու համատեղելիությունը՝ մեր կողմից մշակվել և “Espaces 3 perfectionnement - Méthode de français” դասագրքի յոթերորդ և տասնչորսերորդ դասերին ավելացվել են խոսութային իրազեկության զարգացմանը նպաստող տեքստեր՝ քաղաքավարության և էթիկայի, քաղաքավարության ոչ խոսքային արտահայտչամիջոցների, ֆրանսիացիներին և հայերին բնորոշ հարալեզվական հաղորդակցական միջոցների, սփյուռքահայության, սփյուռքահայ մեծամուն արվեստագետների մասին, ինչպես նաև համապատասխան վարժությունների համակարգ:

Ֆրանսերենի ուսուցումը, օտար լեզուների ֆակուլտետում լինելով մասնագիտական, նպատակ ունի զարգացնել և՛ հաղորդակցական, և՛ հանրամշակութային, և՛ միջմշակութային, և՛ գործաբանական իրազեկություններ: Այդ նպատակով մեր կողմից մշակված տեքստերում և վարժություններում համեմատական կտրվածքով ներկայացվում են հայ և ֆրանսիացի ժողովուրդների հանրամշակութային երևույթները, ֆրանսահայ սփյուռքի կյանքը, դրանցում ներառված է բաժին՝ նվիրված խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության միջոցներին: “Espaces 3 perfectionnement - Méthode de français” դասագրքի և՛ յոթերորդ, և՛ տասնչորսերորդ դասերին ավելացված վարժությունների համակարգը ներառում է ինչպես նախատեքստային, այնպես էլ հետտեքստային առաջադրանքներ, որոնք ներկայացվում են ընդհանուր խորագրով՝ «Ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքներ»: «Նախատեքստային աշխատանք» բաժնի վարժությունները հիմնականում նպատակաուղղված են սովորողների ինքնուրույն աշխատանքի խթանմանը: Այդ առաջադրանքների կատարման ընթացքում նրանք ձեռք են բերում ոչ միայն լրացուցիչ տեղեկատվություն քննարկվող թեմայի շուրջ, այլ նաև խոսքային կարողությունների և հմտությունների ձևավորման համար անհրաժեշտ լեզվական և հանրամշակութային գիտելիքներ:

Քաղաքավարության և էթիկայի մասին տեքստերի վերլուծության և համապատասխան վարժությունների կատարման ընթացքում սովորողներին հնարավորություն է ընձեռվում ֆրանսերենի մասնագիտական դասընթացի շրջանակներում միջմշակութային զուգահեռներ անցկացնել հայկական և ֆրանսիական հանրամշակութային իրողությունների միջև: Ուսանողներն այս կերպ ծանոթանում են դրանց առանձնահատկություններին և համատեղ քննարկումների ու վերլուծությունների արդյունքում վեր հանում նմանություններն ու տարբերությունները՝ ձեռքբերելով միջմշակութային հաղորդակցության իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:

Առաջարկվում են նաև մեղմասությունների, այդ թվում՝ քաղաքավարության մեղմասությունների վերաբերյալ վարժություններ՝ նախապես տրամադրելով որոշակի տեղեկատվություն դրանց մասին: Նմանատիպ աշխատանքը քաղաքավարության և էթիկայի մասին տեքստերի տրամաբանական շարունակությունն է, քանի որ դրանցում ևս նախ պատմական ակնարկ է արվում քաղաքավարության և էթիկայի կանոնների պատմական զարգացմանը և կրած փոփոխություններին, ապա զուգահեռներ անցկացվում ժամանակակից կանոնների միջև: Անդրադարձը ֆրանսիական էթիկայի զարգացման պատմությանը հետապնդում է ոչ միայն տեղեկատվական, հանրամշակութային իրողությունների բացահայտման նպատակ, այլ նաև յուրահատուկ ոճի բառապաշարի իմացություն:

Քաղաքավարության հարալեզվական արտահայտչամիջոցների մասին տեքստերին հաջորդում են վարժություններ, որտեղ սովորողներին առաջարկվում է կատարել ֆրանսիացիներին և հայերին բնորոշ ոչ խոսքային հաղորդակցական միջոցներին վերաբերող առաջադրանքներ: Հարկ է նշել, որ դրանցում սովորողներին հանձնարարվում է նաև համեմատել ֆրանսիացիներին բնորոշ ժեստերը հայերին հատուկ ժեստերի հետ:

Հանեմատության միջոցով առաջարկվում է նաև վերլուծել հայի և ֆրանսիացու ազգային հոգեբանական նկարագրերի առանձնահատկությունները, որոնցով կարող են անմիջականորեն պայմանավորված լինել ոչ խոսքային վարքագծի տարբերությունները: Այդպիսի հանձնարարությունները սովորողներին նախապատրաստում են համանման իրավիճակներում հաղթահարել հաղորդակցական այն խոչընդոտները, որոնք կարող են հետևանք լինել ոչ խոսքային հաղորդակցական միջոցների չիմացության կամ ոչ ճիշտ ընկալման:

Մեր կողմից մշակված մեթոդական համակարգի ֆրանսահայ սփյուռքին վերաբերող բաժնում ներկայացվում են տեքստեր սփյուռքի հայազգի նշանավոր ներկայացուցիչների մասին: Միաժամանակ անդրադարձ է կատարվում Ֆրանսիայում հայ համայնքի ձևավորման և հաստատման գործնաչափ պատմությանը: Տեքստերին հաջորդող վարժությունների միջոցով քննարկվում և վերլուծվում են «սփյուռք» հասկացության հետ սերտորեն կապված «արտագաղթ», «ներգաղթ», «ուղեղների արտահոսք» երևույթները:

Սփյուռքահայությանը նվիրված բաժնում առաջարկվում են նաև հայազգի մեծանուն նկարիչ, արվեստագետ Ժ. Ժանսենի կյանքն ու ստեղծագործությունը ներկայացնող տեքստ և համապատասխան նախատեքստային և հետտեքստային վարժություններ:

Առաջադրվող մեթոդական համակարգը ներառում է նաև ֆիլմի դիտման և ունկնդրման աշխատանք՝ Շառլ Ազնավուրի «Je m'voyais déjà» և «Ils sont tombés» հանրահայտ երգերի ընդգրկմամբ, որոնք բանավոր և գրավոր խոսույթների առաջացումը խթանող յուրահատուկ հանրամշակութային մթնոլորտ են ստեղծում լսարանում:

Ուսանողներին առաջարկվում է Ա. Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը ֆրանսերեն լեզվով: Ֆիլմի ցուցադրումն իրականացվում է նախապես մշակված նախաֆիլմային, ֆիլմային-ետֆիլմային առաջադրանքներով և տնային հանձնարարություններով:

Երգերի ունկնդրման աշխատանքը պահանջում է ոչ միայն դրանց տեքստերի և բովանդակության ընկալում, այլ նաև վերլուծություն և քննարկում:

Մշակված մեթոդական համակարգը պարունակում է նաև հայերենից ֆրանսերեն թարգմանության վարժություններ, որոնք ընդգրկում են և՛ դասագրքի համապատասխան դասի, և՛ մեր կողմից մշակված նյութերի բառապաշարը: Հարկ է նշել, որ թարգմանական բնույթի վարժություններն առհասարակ բացակայում են մշակված դասագրքում, քանի որ վերջինս հրատարակված է Ֆրանսիայում:

Նպատակ հետապնդելով որոշակի թեմատիկ կապ ապահովել առաջադրվող մեթոդական համակարգի առաջադրանքների բովանդակության և մեր հետազոտության թեմայի միջև՝ մեր կողմից մշակված խոսութաստեղծ առաջադրանքներում ներառվել են նաև «խոսույթ» հասկացության վերաբերյալ վարժություններ: Նման առաջադրանքների ընդգրկումը միտված է սովորողների խոսքային գործունեությանն ավելի գիտակցական և նպատակաուղղված բնույթ հաղորդելուն, ինչը նպաստում է նրանց ուսման արդյունավետության բարձրացմանը: «խոսույթ» հասկացության ընկալման տարբեր մոտեցումներին ծանոթանալով և խոսույթի մասին որոշակի պատկերացում ձեռք բերելով՝ ուսանողն ինքն է դառնում շահագրգիռ կողմ ծավալելու տարաբնույթ խոսույթների ստեղծմանն ու վերլուծությանն ուղղված գործունեություն:

Այսպիսով, խոսութային իրազեկությանը վերաբերող տեսական, մեթոդաբանական գրականության և մասնագիտական դասագրքերի վերլուծությունը հնարավորություն է ընձեռեց առաջադրել խոսույթների սերման և ընկալման համապատասխան ընթացակարգերի կատարումն ապահովող մեթոդական համակարգի մշակման անհրաժեշտությունը:

Խոսութային գործունեությունը խթանող տարրերի բացահայտման տեսանկյունից վերլուծության ենթարկված «Espaces 3 perfectionnement - Méthode de français» դասագրքի ավելի արդյունավետ և նպատակային կիրառման համար մեր կողմից առաջարկվեց մշակված դասագրքում խոսութաստեղծ տեքստերի, առաջադրանքների և վարժությունների ներմուծում՝ առաջնորդվելով խոսույթների ընտրության և կիրառման հաղորդակցական ուղղվածություն ունեցող սկզբունքներով:

Ատենախոսության **երրորդ**՝ «Առաջադրվող մեթոդական համակարգի գիտափորձարարական հիմնավորումը» վերնագրով գլուխը ներառում է երկու ենթագլուխ.

- Խոսութային իրազեկության թեստավորման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում,
- Գիտափորձի արդյունքների վերլուծությունը:

Սույն գլխում ներկայացվում են խոսութային իրազեկության մակարդակի ստուգման և գնահատման սկզբունքները և չափորոշիչները: Բացահայտվում է խոսութային իրազեկության թեստավորման հիմնական նպատակը և առաջարկվում է խոսքային կարողությունների գնահատման համապատասխան կաղապար, որն ընկած է հաղորդակցական տարբեր իրադրություններում լեզվի կիրառման կարողությունների գնահատման հիմքում:

Շեշտվում է այն դրույթը, ըստ որի՝ առավել արդյունավետ են բանավոր խոսքի ստուգման և ուսուցման այն թեստերը և առաջադրանքները, որոնք պարունակում են տեսակետների հակադրում, մտադրությունների բացահայտում և այլն: Դասակարգվել և հիմնավորվել են հաղորդակցական մոտեցման շրջանակներում ձևավորված բանավոր խոսք զարգացնող առաջադրանքները՝ տարբեր թեմաների շուրջ բանավոր հաղորդումներ, զեկույցներ, հարցազրույցներ, կարծիքների մեկնաբանություն և վերլուծություն: Այս համատեքստում մեկ անգամ ևս հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի՝ հաղորդակցական թեստերը պետք է առավելագույնս արտացոլեն իրական խոսույթի (լեզվակիրներին բնորոշ) ծավալման գործընթացը, իսկ թեստային առաջադրանքները պիտի ընդգրկեն խոսքային գործողությունների լայն շրջանակ, որն իրագործելի կլինի մասնակցի կողմից և նրան պետք կգա իրական լեզվական միջավայրում հաղորդակցվելիս:

Մանկավարժական գիտափորձն իրականացվել է 2009-2010թթ. ՀԴՄՀ-ի և ԵՊԼՀ-ի օտար լեզուների ֆակուլտետներում: Գիտափորձի նպատակն է հաստատել մշակված խոսութաստեղծ կաղապարի արդյունավետությունը՝ ստուգողական և փորձարարական խմբերում ուսանողների խոսութային իրազեկության մակարդակների համեմատության միջոցով: Փորձարարական խմբում ներգրավված են եղել 70 ուսանող 3-րդ կուրսից: Նույն քանակությամբ ուսանողներ ներգրավված են եղել ստուգողական խմբում:

ՀԴՄՀ-ի և ԵՊԼՀ-ի օտար լեզուների ֆակուլտետների երրորդ կուրսում կիրառվել է “Espaces 3 perfectionnement - Méthode de français” դասագիրքը, որի յոթերորդ և տասնչորսերորդ դասերին փորձարարական խմբում ավելացվել և գիտափորձի մեջ են դրվել մեր կողմից մշակված խոսութային իրազեկության զարգացմանը նպաստող տեքստերը և վարժությունների համակարգը, իսկ ստուգողական խմբում կիրառվել են միայն դասագրքում ներառված նյութերը: Դասերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը տևել է մեկական ամիս առաջին և երկրորդ կիսամյակում:

Փորձարարական խմբի դրսևորած արդյունքները հաստատեցին առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունն առ այն, որ ուսանողների խոսքային հմտությունների զարգացման գործակիցն ավելի բարձր է, քան ստուգողական խմբում:

Հարկ է նշել, որ ուսանողներին առաջարկվել են ոչ թե տեքստեր, այլ՝ կոնկրետ իրավիճակ, խոսույթի ձևն ու թեման: Նրանք պետք է հասկանան, կազմեն արդեն իսկ ուսումնասիրված ու սովորած նախատիպային օրինակները: Առաջնային նշանակություն ունի խոսքային վարվելակարգի կամ վարվեցողության բառերի ուսուցումը, քանի որ նրանք հաստատուն տեղ են գրավում ցանկացած խոսույթի մեջ:

Իրականացված գիտափորձի սկզբում և վերջում ստուգվել են ուսանողների խոսութային կամ խոսութաստեղծ հետևյալ հիմնական կարողությունները.

1. ուշադիր ունկնդրել զրուցակցին,
2. հասկանալ զրուցակցի ասածը (ապակողավորել),
3. պատասխանել (կողավորել),
4. ընտրել հաղորդակցության ճիշտ ռազմավարություն,
5. հասկանալ զրուցակցի «մարմնի լեզուն»,
6. հանդուրժել նրա «ճիշտը» և «սուտը»,
7. ճիշտ և ժամանակին նրան ընդհատել,
8. խոսքը շարունակել և հնարավորություն տալ ընտրել խոսակցության նոր թեմա,
9. առանձնացնել խոսակցության թեմայում զխավորը երկրորդականից,
10. ասածը հաստատել կամ ժխտել համապատասխան ժեստերով:

Աղյուսակ 1-ի առաջին հատվածում ներկայացված են ստուգողական խմբի ուսանողների ցույց տված միջին միավորները գիտափորձից առաջ և հետո վերը նշված խոսութային կամ խոսութաստեղծ տասը հիմնական կարողություններից յուրաքանչյուրի դեպքում: Միավորների հաշվարկման համար օգտագործվել է Microsoft Excel ծրագիրը:

Աղյուսակի 1-ի երկրորդ հատվածում նույն ծրագրի օգնությամբ հաշվվել են փորձարարական խմբի ուսանողների դրսևորած միջին միավորները գիտափորձից առաջ և հետո նշված խոսութային կամ խոսութաստեղծ տասը հիմնական կարողություններից յուրաքանչյուրի բնագավառում: Ուսանողների խոսութային կարողությունները տրվում են քսան բալանոց համակարգով:


ԱՂՅՈՒՍԱԿ N 1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՈՍՈՒԹԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ

№	Կարողություններ	Ստուգողական		Փորձարարական	
		խումբ, 70 ուսանող		խումբ, 70 ուսանող	
		Միավորները (միջինացված)		Միավորները (միջինացված)	
		Գիտափորձից առաջ	Գիտափորձից հետո	Գիտափորձից առաջ	Գիտափորձից հետո
1.	ուշադիր ունկնդրել զրուցակցին,	12	14	13	17
2.	հասկանալ զրուցակցի ասածը /ապակողավորել/,	12	14	12	16
3.	պատասխանել /կողավորել/,	13	14	12	15
4.	ընտրել հաղորդակցության ճիշտ ռազմավարություն,	10	12	11	14
5.	հասկանալ զրուցակցի «մարմնի լեզուն»,	11	12	10	15
6.	հանդուրժել նրա «ճիշտը» և «սուտը»,	13	15	14	17
7.	ճիշտ և ժամանակին նրան ընդհատել,	14	16	15	18
8.	խոսքը շարունակել և հնարավորություն տալ ընտրել	13	15	14	17

	խոսակցության ճորժեմա,				
9.	առանձնացնել խոսակցության թեմայում զխավորը երկրորդականից,	14	16	15	18
10.	ասածը հաստատել կամ ժխտել համապատասխան ժեստերով	13	15	12	17
	Միջին միավորը	12,5	14,3	12,8	16,4

Աղյուսակ 1-ում արձանագրված միավորները արտացոլված են Գծապատկեր 1-ում:

ԳՑԱՊԱՏԿԵՐ N 1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՈՍԱԿՑՈՒՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԽԱՔԵՐՈՒՄ



Ըստ աղյուսակ 1-ի՝ վերը նշված բոլոր խոսության կարողությունների բնագավառում ստուգողական խմբի ուսանողների դրսևորած միջին միավորները գիտափորձից առաջ և հետո կազմում են 12,5 և 14,3 , իսկ փորձարարական խմբում՝ 12,8 և 16,4: Դրանք տոկոսային հարաբերակցության մեջ դնելով առավելագույն քսան միավորի հետ՝ ստուգողական խմբում գիտափորձից առաջ ստացվում է 62,5%, գիտափորձից հետո՝ 71,5%, իսկ փորձարարական խմբում գիտափորձից առաջ գրանցվում է 64%, գիտափորձից հետո՝ 82%: Համեմատելով ստուգողական և փորձարարական խմբերի ցույց տված արդյունքները գիտափորձից առաջ և հետո՝ ստուգողական խմբում արձանագրվում է ուսանողների խոսության կարողությունների զարգացման 9% աճ, իսկ փորձարարական խմբում՝ 18% աճ:

Ստուգողական և փորձարարական խմբերի դրսևորած արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողների խոսության կարողությունների զարգացման գործընթացն ավելի արագ և արդյունավետ է ընթանում: Այս փաստը պայմանավորված է այն հանգամանքով, որ դասընթացը նախագծելիս և իրականացնելիս շեշտը դրվում է ոչ միայն խոսքային, այլ նաև ոչ խոսքային և միջմշակութային հաղորդակցության միջոցների ուսուցման վրա:

Բանավոր և գրավոր խոսույթների ստեղծման ու վերլուծության, ոչ խոսքային հաղորդակցական միջոցների կիրառման տեսանկյունից՝ գիտափորձի գործնական մակարդակում ստուգվել են նաև ուսանողների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական միջոցների կիրառման:

Ստուգողական և փորձարարական խմբերի ցուցաբերած արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր խմբերում էլ գիտափորձի սկզբում թույլ են զարգացած սոցիալ-մշակութային գիտելիքները, հատկապես երբ խոսքը տվյալ երկրի նշանային համակարգի, «մարմնի լեզվի» իմացության մասին է: Հստակորեն մշակված, հետևողական աշխատանքը մեծ արդյունքներ է տալիս, քանի որ ուսանողները սկսում են գիտակցել իրենց հաղորդակցական դժվարությունների պատճառները:

Մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ փորձարարական խմբում գիտափորձի վերջում ուսանողներն ավելի լավ արդյունքներ են ցուցաբերում ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքներ կատարելիս, նախագծեր կազմելիս և մարմնի լեզվին վերաբերող արտահայտչամիջոցներ կիրառելիս:

Այսպիսով, առաջարկված մեթոդական համակարգի արդյունավետությունը հաստատվեց երկու բուհերի՝ ԶՊՄՀ-ի և ԵՊԼՀ-ի օտար լեզուների ֆակուլտետների երրորդ կուրսի ֆրանսերենի մասնագիտական դասընթացներում կազմակերպված ու անցկացված մանկավարժական գիտափորձի արդյունքներով: Գիտափորձի վերջում արձանագրվեց ուսանողների խոսության աշխատանքի կատարման արդյունավետության աճ: Դա արտահայտվում է վերը նշված հիմնական ցուցանիշներով: Ստացված արդյունքների հավաստիության հիմքում ընկած է ստուգողական և փորձարարական խմբերում ուսանողների համակազմի անփոփոխ լինելը:

Հետազոտության արդյունքները ներդրվում են ԵՊԼՀ-ի և ԶՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետներում, որտեղ ֆրանսերենն ուսումնասիրվում է որպես առաջին մասնագիտություն:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական **եզրակացությունները.**

1. Լեզվաբանության զարգացման տարբեր փուլերում «տեքստ» և «խոսույթ» հասկացությունները սկսեցին աստիճանաբար սահմանագատվել իրենց բովանդակային և գործառական բնութագրերով: Դրան նպաստեցին ոչ միայն գործաբանական, գործառական, փոխակերպական լեզվաբանության, այլ նաև հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության, և, իհարկե, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման արդի միտումները:
2. Նշված հասկացությունների նույնացման պատճառներից մեկն այն է, որ նրանք հաղորդակցական գործունեության արդյունք են և ներկայացնում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքի ստեղծագործություններ:
3. Գործաբանական լեզվաբանության տեսանկյունից կարևոր է այն, որ մի կողմից՝ խոսույթն արտացոլում է լեզվակրի կամ լեզուն ուսումնասիրողի մշակութային, ազգային մտածելակերպին բնորոշ առանձնահատկությունները, մյուս կողմից՝ այն կրում է անհատական բնույթ:
4. Հաղորդակցության բոլոր տեսակներում անխուսափելիորեն առկա է դրոպապատճառային տարրը՝ խոսույթի ձևավորման օբյեկտիվ անհրաժեշտության իրադրությունը:
5. Խոսութային իրազեկությունը հանդես է գալիս որպես խոսքային վարքագծի պլանավորման, կապակցված, տրամաբանական և հիմնավորված արտահայտություններով տեղեկատվությունը հասկանալու ու փոխանցելու, շփման գործառական խնդրին համաձայն՝ արտահայտությունը կառուցելու և կազմակերպելու կարողություններ և հմտություններ:
6. Ֆրանսերենի մասնագիտական դասընթացը ենթադրում է ուսուցման տարբեր փուլերում խոսութային իրազեկության զարգացում, որը տեղի է ունենում հաղորդակցական իրազեկության զարգացման շրջանակներում, որտեղ առաջին պլան են մղվում ոչ միայն խոսքային, այլ նաև ոչ խոսքային արտահայտչամիջոցները:
7. Կարևոր են մանկավարժի ընտրած ռազմավարությունը, աշխատառճը, նպատակադիրքորոշումները ոչ միայն խոսութաստեղծման, այլև խոսույթի վերլուծության գործընթացում: Խոսութաստեղծ գործընթացը ենթադրում է հետևողական աշխատանք արտասանության, քերականության ու բառապաշարի հետ: Այստեղ կարևորվում է դասավանդման ռազմավարությունների ընտրությունն ու կիրառումը համապատասխան խոսքային իրադրություններում:
8. Վերլուծված դասագրքերում խոսութաստեղծ գործունեության հիմնական պայմանները հիմնականում հաշվի են առնված այն առումով, որ դրանցում կիրառվել են քննադատական, ստեղծագործական և հնչարտաբերական մտածողության զարգացման սկզբունքները: Սակայն ոչ բոլոր վարժություններն ունեն խոսութային ուղղվածություն: Միայն համապատասխան լրանշակումը կարող է տալ ցանկալի արդյունք:
9. Շրջանառվող դասագրքերի լրանշակման և հարմարեցման հիմքում մեր կողմից առաջադրված է այն գաղափարը, որ նրանցում հարալեզվական միջոցները հիմնականում բացահայտ ներկայացված չեն, բացակայում են համեմատական կտրվածքով Հայաստանի, հայ ժողովրդի հանրամշակութային երևույթները, ֆրանսահայ սփյուռքի կյանքը ներկայացնող տեքստեր և նրանց բովանդակությունը գործաբանական, հանրամշակութային տեսանկյունից լուսաբանող ձայներիզներ, տեսաերիզներ:
10. Ձուգադրական կտրվածքով վերլուծելով հայ և ֆրանսիացի ժողովուրդների հանրամշակութային երևույթները՝ մեր կողմից վեր են հանվել հայերենին և ֆրանսերենին բնորոշ լեզվամշակութային իրողությունները, ինչպես նաև ոչ խոսքային հաղորդակցության միջոցների առանձնահատկությունները երկու լեզուներում:
11. Խոսութաստեղծման անհրաժեշտ պայման է պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և համապատասխան ռազմավարությամբ հաղթահարումը: Այդ առումով անհրաժեշտ է մինչխոսութային, խոսութային և հետխոսութային աշխատանք՝ կապված համապատասխան լեզվամշակութային իրողությունների վերլուծության, նորաբանությունների, իրակությունների հաղթահարման հետ, քանի որ շատ դեպքերում անգամ բավականին հայտնի թեմաները կարող են պարունակել իր բարդությամբ նոր բառապաշար:
12. Հաղորդակցական մեթոդիկայի շրջանակներում մեր կողմից մշակված մեթոդական համակարգի կիրառման գործընթացում ուսանողները ոչ թե մեխանիկորեն վերարտադրում են տեքստերը, այլ ստեղծում են խոսույթներ, ինչը չի կարող լինել ինքնանպատակ այն առումով, որ դրանք ունեն հաղորդակցական ուղղվածություն և իրադրային են իրենց բնույթով: Համապատասխանաբար ուսանողը նախ և առաջ պիտի հաստատապես հասկանա ու գիտակցի իր հաղորդակցական նպատակը: Սա վերաբերում է թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքին: Այս տեսանկյունից կարևորվում է ոչ միայն թեմայի, տեքստի, այլև խոսույթի ընտրության հիմնահարցը:
13. Մանկավարժական գիտափորձի ստուգողական և փորձարարական խմբերի դրսևորած արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբի ուսանողների խոսութային

կարողություններն ավելի արագ են զարգանում, քանի որ դասընթացը նախագծելիս և իրականացնելիս շեշտը դրվում է ոչ միայն խոսքային, այլ նաև ոչ խոսքային հաղորդակցության միջոցների ուսուցման վրա:

Չեղարկության հիմնական դրույթներն արտացոլված են

հետևյալ հրապարակումներում.

1. Բալայան Մ. Ս. «Խոսույթի սահմանումը ֆրանսիական լեզվաբանական ավանդույթի շրջանակներում», Կանթեղ 1: Գիտական հոդվածների ժողովածու. - Գիրք 1(38), Եր.: Ասողիկ, 2009, էջ 229-234:
2. Բալայան Մ. Ս. «Խոսույթ» հասկացության բովանդակային և գործառական բնութագրերը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, «Իրավաբանական կենտրոն-Press», 2009, N 1[21], էջ 93-95:
3. Հարությունյան Ն. Կ., Բալայան Մ. Ս. «Խոսութային իրազեկության զարգացման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում», «Մանկավարժական միտք» հանդես, Եր.: «Ձանգակ 97», 2009, N 1-2, էջ 76-81:
4. Բալայան Մ. Ս. «Խոսութային իրազեկության զարգացման հիմնախնդիրը ֆրանսերենի մասնագիտական դասագրքերում», ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2009թ. նոյեմբերի 19-21), II պրակ, Եր.: Մանկավարժ, 2010, էջ 160-162:
5. Բալայան Մ. Ս. «Խոսութաստեղծ գործունեության կադապարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում», «Մանկավարժական միտք» հանդես, Եր.: «Ձանգակ 97», 2010, N 3-4, էջ 184-189:

БАЛАЯН МЕРИ САРГИСОВНА

РАЗВИТИЕ ДИСКУРСИВНОЙ КОМПЕТЕНЦИИ В ПРОФЕССИОНАЛЬНОМ КУРСЕ ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (французский язык).

Защита диссертации состоится 29 июня 2012г. в 14⁰⁰ на заседании специализированного совета педагогики 065 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52^а, ЕГУ, корпус факультета армянской филологии, аудитория 203.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена актуальной проблеме развития дискурсивной компетенции в профессиональном курсе французского языка.

Актуальность исследования.

В лингвистических вузах РА проблема профессионального обучения французскому языку решается с новых методологических позиций. В этом ракурсе процесс развития дискурсивной компетенции рассматривается с учетом учебных и внеучебных факторов, места и времени, продолжительности обучения французскому языку, состава студентов, их статуса в данном социуме, содержательных характеристик познавательных и прагматических потребностей.

С точки зрения развития дискурсивной компетенции подчеркивается значение разработки процедур работы с аутентичными текстами. В этом плане дискурс выступает как основная единица обучения иностранному языку. Под этим углом зрения кардинально меняются содержание обучения и динамика межличностных отношений. Актуальность исследования подтверждается тем, что формирование дискурсивных умений способствует развитию навыков и умений дискурсивного анализа у студентов.

Целью исследования является создание соответствующих дискурсопорождающих моделей и разработка методической системы развития дискурсивной компетенции с применением современных педагогических технологий и процедур.

Задачи исследования.

1. Изучать лингвистическую и методическую литературу, раскрывающую содержательные и функциональные характеристики текста и дискурса.
2. Раскрыть особенности развития дискурсивной компетенции.
3. Сравнить текстовые и дискурсивные упражнения и обосновать продуктивность дискурсопорождающей модели.
4. Проанализировать лингвокультурологические реалии армянского и французского языков с точки зрения лексической и культурно-прагматической интерференции.
5. Разработать методическую систему развития дискурсивной компетенции, которая включает процедуры и технологии отбора и организации текстов, дискурсов, ситуаций и т.д.
6. Обосновать эффективность разработанной методической системы научным экспериментом.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 3 глав, заключения, библиографии и приложений.

Научная новизна исследования заключается в том, что создана дискурсопорождающая модель, в основе которой лежат принципы прагматической лингвистики и коммуникативного подхода. Разработана методическая система развития дискурсивной компетенции, в основе которой лежат коммуникативные принципы отбора и применения учебных дискурсов. Создание продуктивной модели развития дискурсивной компетенции позволяет выделить следующие функции:

- адаптация современных учебно-методических комплектов;
- отбор учебных и аутентичных текстов;
- составление соответствующих упражнений и заданий.

Апробированы тесты дискурсивной компетенции, которые имеют контрольно-обучающий характер.

Теоретическое значение заключается в том, что изучены основные лингвистические, психолингвистические, социолингвистические и методические подходы к работе с текстом и дискурсом, раскрыты содержательные и функциональные особенности данных понятий, рассмотрены типичные и окказиональные проявления лексической, грамматической и прагматической интерференции с точки зрения типологических особенностей армянского и французского языков. Создана продуктивная модель развития дискурсивной компетенции с соответствующими компонентами, которые обеспечивают трансформации поверхностных и глубоких структур.

Практическое значение исследования.

Разработана для профессионального курса французского языка система упражнений по развитию, проверке и оценке дискурсивной компетенции. Разработаны аналитические процедуры применения дискурсов в учебных целях. Осуществлен естественный эксперимент по оценке вузовских учебников французского языка с точки зрения развития дискурсивной компетенции, который может способствовать созданию и составлению учебно-методических комплектов.

Апробация результатов исследования.

Основные положения результатов исследования обсуждались на заседаниях кафедры иностранных языков и методики их преподавания в АГПУ им. Х. Абовяна. В результате проведенного тестирования на факультетах

иностранных языков АГПУ им. Х. Абовяна, ЕГЛУ им. Брюсова получены данные об особенностях применения дискурсов в учебных целях, которые были учтены при разработке методической системы отбора и применения дискурсов на разных этапах обучения французскому языку на факультете иностранных языков. Материалы исследования внедрены в практику преподавания французского языка на факультетах иностранных языков АГПУ им. Х. Абовяна, ЕГЛУ им. Брюсова.

По теме диссертации опубликовано пять научных статей.

MERI S. BALAYAN

THE DEVELOPMENT OF DISCOURSE COMPETENCE IN THE PROFESSIONAL COURSE OF FRENCH LANGUAGE

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and education methodology" (French language).

The defence of the thesis will be held at 14⁰⁰ on June 29, 2012 at the session of the Special Board of Pedagogy 065 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State University, address: 0025, 52^a, Abovyan st., Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N 203.

SUMMARY

The thesis deals with the urgent problem of development of discourse competence in the professional course of French.

The actuality of the research.

In linguistic universities in RA the problem of professional French teaching is solved from new methodological positions. From this perspective, the process of development of discourse competence is considered in the light of educational and extra-curricular factors, place and time, the duration of teaching French, the staff of students, and their status in the given society, substantial characteristics of cognitive and pragmatic needs.

It emphasizes the importance of developing procedures for working with authentic texts from the point of view of discourse competence. In this regard, the discourse serves as the basic unit of foreign language teaching. From this standpoint the content of teaching and the dynamics of interpersonal relationships change drastically. The vitality of research is confirmed by the fact that the formation of discourse skills contributes to the development of habits and skills of discourse analysis.

The aim of the research is to establish appropriate discourse generating models and the development of methodological system of discourse competence using modern pedagogical technologies and procedures.

The objectives of research:

1. Study the linguistic and methodological literature disclosing the content and functional characteristics of text and discourse.
2. Reveal the main peculiarities of the development of discourse competence.
3. Compare text and discourse exercises and substantiate the effectiveness of discourse generating model.

4. Analyze linguo-cultural realities of Armenian and French languages from the perspective of lexical, cultural and pragmatic interference.
5. Develop a methodological system of discourse competence, which includes procedures and technologies of selecting and organization of work with texts, discourses, situations, etc.
6. Substantiate the efficiency of the developed methodological system with scientific experiment.

Content of research is reflected in the structure of the dissertation, which consists of introduction, 3 chapters, conclusion, bibliography and appendices.

Scientific novelty of the research: discourse generating model has been created, which is based on the principles of pragmatic linguistics and communicative approach. The methodological system of developing discourse competence is worked out, which is based on communicative principles of selecting and implementing academic discourses. The creating of productive model of discourse competence allows to single out the following functions:

- adapting modern teaching complexes;
- selection of academic and authentic texts;
- making relevant exercises and activities.

The tests of discourse competence were examined, which have character of piloting and training.

The theoretical significance of the research.

It explores the fundamental linguistic, psycholinguistic, sociolinguistic and methodological approaches to working with text and discourse, content and functional features of these concepts, reveals the typical and occasional manifestations of lexical, grammatical and pragmatic interference in terms of typological characteristics of the point of view of Armenian and French. A productive model of discourse competence is developed with the corresponding components that provide the transformation of surface and deep structures.

The practical significance of the research.

The system of exercises on developing, checking and evaluation of discourse competence in the professional course of French is worked out. Analytical procedures of applying discourses for teaching purposes are developed. Natural experiment to assess French language university textbooks from the standpoint of discourse competence is carried out, which may contribute to the creation and preparation of training kits.

Exploration of research results.

The main points of the research were discussed at the sitting of the department of foreign languages and their teaching methodology in ASPU after Kh. Abovyan. As a result of testing carried out at the Faculty of Foreign Languages ASPU after Kh. Abovyan, YSLU after V. Bryusov are obtained data about the features of discourse for educational purposes, which were taken into consideration to develop methodological system of selection and application discourses at different stages of learning French at the Faculty of Foreign Languages. The research materials are put into practice of teaching French at the Faculty of Foreign Languages in ASPU after Kh. Abovyan, in YSLU after V. Bryusov.

On the topic of the thesis were published five scientific articles.